միներից: Այդ բոլորը տեսել էի ես: Իսկ երբ տեսայ Աղթամարայ կաթողիկոսին, իսկոյն իմ մտքում ծագեց մի այդպիսի համեմատութիւն՝ ահա մի երկրորդ Մար-շիմոն:

Մենք գտանք նրան ոտքի վրայ, շրջապատուած մի խումբ աբեղաներով, ծովեզրում սպասում էր նաւակին:

— Յոյս ունեմ, որ չէք մեղադրի ինձ, պարոն բժշկապետ, — ասաց նա, երբ մենք ոտք դրեցինք ցամաքի վրայ եւ մօտեցանք աջը համբուրելու. — ես երէկ անհամբեր սպասում էի ձեզ... վարդապետը ինձ այդպէս էր լուր տոել... Դուք երէկ պէտք է շնորհ բերէիք:

Խօսքը Կարօյի մասին էր, երեւում էր, որ նա սկզբից յայտնել էր նորին վեհափառութեանը, որ նրա վանքում պէտք է այցելութիւն գործի մի եւրոպացի ճանապարհորդ:

— Վարժապետը չէ սխալուել, մեղաւորը ես եմ, — պատասխանեց Ասլանը, նոյնպէս ներողութիւն խնդրելով: — Իրաւ է, ես երէկ պէտք է գայի, բայց ինձանից շատ ժամանակ խլեցին Ոստանի աւերակները, եւ ես ստիպուած եղայ գիշերել վարժապետի եղած գիւղում, ձերդ վեհափառութեանը այդպէս անհանգստութիւն պատճառելով:

Կաթողիկոսի դէմքի վրայ նշմարուեց մի տեսակ անվճռականութիւն: Ասլանը, այդ նկատելով, ասաց նրան.

— Ես ձեզ արգելք չեմ լինի, վեհափառ տէր, ինձ ասացին, որ գործով ուրիշ տեղ էք գնալու:

— Այո՛, այդ գործը երէկոյայ համար նշանակուած էր, բայց ես յետաձգեցի ձեր պատճառով, պարոն բժշկապետ, որովհետեւ սպասում էի ձեզ ընդունելու: Դա մի հին վէճ է, պէտք է մի կերպով վերջացնել: Ես կը վերադառնամ երեկոյեան, եւ մինչեւ իմ վերադարձը իմ միաբանները ամէն պատրաստականութիւն ցոյց կը տան ձեզ՝ հետազօտելու թէ իմ վանքը եւ թէ իմ կղզին:

— Դուք շատ ողորմած էք, վեհափառ տէր, ցաւում եմ, որ այդպէս պատահեց, ես մինչեւ ձեր վերադարձը իմ հետազօտութիւնները կը վերջացնեմ:

Նա, յաջողութիւն բարեմաղթելով, բաժանուեցաւ մեզանից, մտաւ նաւակի մէջ: Երկու աբեղաներ սկսեցին թիավարել:

Չնայելով իր տարիքին, բոլորովին առոյգ եւ աշխոյժ մարդ էր երեւում կաթողիկոսը: Նա այնպէս ցատկեց նաւակի մէջ, ինչպէս մի քսանուհինգամեայ երիտասարդ: Հէնց առաջին անգամից մեծ տպաւորութիւն գործեց իմ վրայ այդ բարձր հոգեւորականը իր պատկառելի, փառահեղ դէմքով: Իր պարզ, շալեղէն հագուստով բնաւ չէր որոշւում նա միւս միաբաններից: Անա-